ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՍԵՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ և ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՊՈՒՄ(ԹԵՈԴՈՐ ԴՐԱՅԶԵՐ, ՄԱՐԻՈ ՊՅՈՒԶՈ, ՀԱՐՐԻ ԳՐԵՅ)

**Ժ.01.07**-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան-2024**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

**Գիտական ղեկավար՝** բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Քրիստինե Հենրիկի Բեջանյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գայանե Վիուլի Եղիազարյան**

բանասիրական գիտությունների դոկտոր **Կարեն Ջալլաթյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. նոյեմբերի 29-ին՝ ժամը $14^{30}$ -ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲԿԳԿ 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 420 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի հոկտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ա. Վ. Եգանյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության **առարկան** բարոյաիրավական ու դատաիրավական պատասխանատվության և կամքի ազատության խնդիրն է XX դարակեսերի ամերիկյան վեպում: Աշխատության **կարևոր խնդիրն** է ուսումնասիրել և բացահայտել դեռևս վաղնջական ժամանակներում առկա դատաիրավական համակարգի կիրառումը, զարգացումն ու հետագա սերունդներին ժառանգելը, որոնք ծնունդ են տվել բարոյաիրավական նորմերին իրենց իսկ հասարակության մեջ: Զանց չեն առնվել նաև աստվածաշնչյան պատվիրանները, հունա-հռոմեական և անգլիական մշակույթներում առավել տարածված օրենքներն ու դրանց մշակումն ընդհուպ XX հարյուրամյակում: Մասնավորապես քննարկվել են աստվածաշնչյան պատգամները կամ տասը պատվիրանները, հունա-հռոմեական մշակույթում առկա 12 օրենքները, միջնադարյան Անգլիայի ասպետական օրենքները և XXI դարում կիրառվող դատաիրավական համակարգը, որը կաշկանդում է անձի ազատությունը: Ատենախոսությունը միտված է քննարկելու և բացահայտելու անհատի ազատության սահմանափակման դրդապատճառները, ինչպես նաև այն հանգամանքները, իրավիճակներն ու հոգեբանական բոլոր գործոնները, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել XX դարի ամերիկյան վեպի կերպարների բարոյահոգեբանական խառնվածքի վրա: Աշխատության մեջ քննության են առնվում XX դարի ամերիկյան գրականության խոշորագույն վեպերից երեքը՝ *Թեոդոր Դրայզերի «Ամերիկյան ողբերգությունը», Հարրի Գրեյի «Ավազակները» և Մարիո Պյուզոյի «Կնքահայրը»*, որոնք ամբողջովին ներկայացնում են դարաշրջանի ամերիկյան դատաիրավական համակարգի ամենաթողությունն ու դրանից բխող անհատի պատասխանատվության և ազատության հետ աղերսվող բազմաթիվ խնդիրները: Սա է աշխատանքի **օբյեկտը:**

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է բոլոր ժամանակներին բնորոշ դատական զանազան իրավիճակներում հայտնված մարդկային վարքագծի ամենատարբեր դրսևորումներով: Համաշխարհային հռչակ վայելող երեք ստեղծագործությունններն էլ, որոնք, ի դեպ, վաղուց բավական հաջող վերածվել են կինոֆիլմերի, առատ նյութ են տալիս առաջադիր խնդրի բացահայտման համար:

## ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսսության թեմային անմիջական առնչություն ունի միակ ուսումնասիրությունը, որը 1931 թ. կատարել է ամերկացի հայտնի գրականագետ Բենջամին Կարդոզոն (*«Օրենք և գրականություն և այլ էսսեներ ու դիմումներ»*):Բայց այստեղ հպանցիկ անդրադարձ կա միայն Թ. Դրայզերի ստեղծագործությանը, իսկ մեր աշխատանքի մյուս երկու վեպերը ոչ մի ուսումնասիրության չեն ենթարկվել: Կարելի է նաև ավելացնել 2007 թ. Քերան Դոլինի *«Քննադատական ներածություն օրենքի և գրականությոա մեջ»* աշխատությունը:

Ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ գեղարվեստական գրականության միջոցով համակարգված կերպով առաջ են քաշվում քրեաիրավական մի շարք նորմեր, որոնք կիրառելի են հասարակության մեջ: Ուսումնասիրվող երեք վեպերի օրինակների հիման վրա հանգամանալից քննարկվում և համեմատվում

են քրեական և գանգստերական օրենքները, նաև դրանց կիրառումներն ու պատճառահետևանքային կապերը:

Ուսումնասիրության խնդրո առարկա երեք վեպերն առաջադրում են օրինականության ուժի հստակ հարցադրումներ, որոնք ըստ էության բացահայտվել և ներկայացվել են ըստ նշանակության: Հատելով պատմագրական ժամանակի ուղեծիրը՝ մեր առջև **նպատակ** ենք դրել ուսումնասիրել և բացահայտել հնագույն օրինականության դաշտը և դրա զարգացումն ու փոփոխությունը մինչ մեր օրեր, ինչպես նաև անդրադառնալ ամերիկացի այն երևելի հեղինակներին, որոնք իրենց ստեղծագործություններում այս կամ այն եղանակով կարողացել են ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի իրավական համակարգն ու բարոյական նորմերը: Ըստ այդմ էլ՝ ատենախոսության մեջ օրենքների և իրավական ակտերի համադրմամբ զետեղել ենք գրական այն երկերը, որոնք ներառում են հետաքրքիր տեղեկություններ և օրինական փաստարկներ Արթուրյան լեգենդների ասպետական ժամանակաշրջանից մինչև XX դարի ամերիկյան կրիմինալիստական գրականություն: Այսպիսով, նպատակին հասնելու համար առանձնացրել ենք հետևյալ **խնդիրները՝**

1. ուսումնասիրել դատաիրավական համակարգի կամ առհասարակ օրենքի գործառույթի կիրառման ճշգրիտ սկզբնավորումն ու զարգացման ճանապարհը, որի հետագա ճակատագիրն արդեն կապված է նաև կյանքի մյուս ոլորտների հետ;
2. ուսումնասիրել հնագույն օրինականության դաշտն ու դրա զարգացումն ու փոփոխությունը մինչ XX դար, աստվածաշնչյան պատգամների և պատվիրանների մեկնաբանությունները, տարբեր մշակույթներում տարածված օրենքների որոշ տեքստերը, ինչպես նաև բացահայտել այս տեքստերի ներթափանցումը գրական երկերում և դրանց արտացոլումը անգլոամերիկյան գրականության մեջ;
3. անդրադառնալ անգլոամերիկյան այն հայտնի հեղինակներին, որոնք իրենց ստեղծագործություններում այս կամ այն եղանակով կարողացել են ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի իրավական համակարգն ու բարոյական նորմերը;
4. ուսումնասիրել XX դարի ամերիկյան կրիմինալիստական գրականության ժանրը իր ենթաժանրերով;

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքում օգտագործվել են անգլերեն, հայերեն, ռուսերեն և գերմաներեն աղբյուրներ, որոնցից կատարված հղումները նշված են համապատասխան տողատակերով:

Ատենախոսությանա մեջ համառոտ նկարագրելով աշխատանքի մեթոդաբանական հիմքը, ներկայացվել է թեմային առնչվող քննադատակն գրականության բավականին ընդարձակ ակնարկ, ինչպես նաև ընդհանուր գծերով՝ նյութի ուսումնասիրության աստիճանը, հարցի պատմությունը, հիմնվելով իրավագետներ Ռ. Վինսբերգի, Ֆ. Աբելի, Ռ. Բոմանի, Բ. Բաումանի, Շ. Գյուքի, Է. Հենզի, Լ. Պաոլիի, Լ. Սիգելի, Փ. Շտեյնի, Ի. Պակրովսկու աշխատություններին, ինչպես նաև անդրադարձել ենք ռուս գրաքննադատ Անիկինի մտորումներին, քրեագետ գրողներ Լեո Քաթչերի և Ռիչ Քոհենի ուսումնասիրություններին, ամերիկացի հոգեբույժ Է. Թորնդայքի ու ամերիկացի հոգեթերապևտ Ա. Կազդինի տեսակետներին: Դրանք արդեն վերաբերում են անձի վարքագծային դրսևորումներին, որոնք կարող են ազդվել և վերափոխվել հանցագործային վարքային շեղումների: Չմոռանանք նշել Ա.

Բանդուրայի, Ջ. Բերքի, Ռ. Բլեքբըրնի, Ռ. Հերի, Ջ. Ռոթերի, Դ. Շումեյքրի, Բ. Սքիների աշխատությունները: Սա մեր ուսումնասիրության **մեթոդաբանական հիմքն** է: Այս ամենը բացահայտելու համար պետք է անդրադառնանք նաև գրական տարբեր ժանրերի, որոնք ավելի մեծ զարգացում ստացան Ամերիկայում XX դարում:

Հաշվի առնելով ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները՝ կիրառվել են **պատմահամեմատական, զուգադրական վերլուծության մեթոդները:** Բացի այդ, ուսումնասիրությունը կատարվել է փիլիսոփայական ընդհանրացման իրավագիտական և հոգեբանական դիտարկումների տեսանկյունից: Իրականացվել է միջգիտակարգային հետազոտությոքւն՝ օգտագործելով մշակութային, գրականագիտական և պատմական ուսումնասիրությունների հետազոտական գործիքները: Կատարվել է սկզբնաղբյուրների բազմակողմանի վերլուծություն:

Ատենախոսության գլուխներում **համեմատական մեթոդով** հետազոտվել են վերոնշյալ վեպերի առանցքային կապվածությունը դատաիրավական համակարգի, օրինազանցության, սեփական արժեքներին համապատասխան օրինենքների սահմանման հետ: Ուսումնասիրվել են ոչ միայն վեպերի կենտրոնական կերպարներն ու դրանց բարոյահոգեբանական դրսևորումները հանրության մեջ, այլև նրանց կողմից կիրառելի ուժի և պատժի հետևանքները: Քննադատական գրականության վերլուծությունը նույնպես կարևոր բաղադրիչ է, որն օգտագործվել է ատենախոսության ուսումնասիրման մեթոդաբանության մեջ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել համեմատական գրականության թեմաներով տարբեր տեսական վերլուծություններում ու աշխատություններում, ինչպես նաև կարող է տեսական աղբյուր դառնալ հեղինակների ստեղծագործության ժամանակակից մեկնաբանման և ներկայացման համար:

Աշխատանքը արժեքավոր է այն դիտանկյունից, որ գիտական և փորձարարական նոր տեսլական է առաջադրում Թ. Դրայզերի, Մ. Պյուզոյի, Հ. Գրեյի ստեղծագործության ուսումնասիրման համար:

Այն ունի գործնական նշանակություն և կարող է օգտագործվել արտասահմանյան գրականության դասախոսություններում: Վերլուծության արդյունքները կարող են գիտակն հիմք դառնալ կրիմինալիստական վեպի ժանրի ուսումնասիրման համար՝օրինակ բերելով Պյուզոյի, Գրեյի ստաղծագործություններում հերոսի ինքնության հայեցակրգի, կերպարանակերտման սկզբունքները:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔԱՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են տպագրված գիտական չորս հոդվածներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, (իր հերթին առաջին գլուխն ունի մեկ ենթագլուխ) եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, որտեղ ներկայացված է 84 անվանում՝ անգլերեն, հայերեն, ռուսերեն լեզուներով և հավելվածից: Այն շարադրված է 148 համակարգչային էջի վրա՝ ներառյալ գրականության ցանկը և հավելվածը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նորույթը, մեթոդաբանական հիմքը և կիրառվող մեթոդները, ինչպես նաև ներկայացված են խնդիրները, նպատակը, ուսումնասիրության օբյեկտը, առարկան, ծավալը և կառուցվածքը:

## Գ Լ Ո Ւ Խ I
## ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԱՂԵՐՍՆԵՐԸ ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դատաիրավական համակարգը լայնածավալ և բարդ տիրույթ է, որն ընդգրկում է ոչ միայն իրավական նորմերն ու օրենսդրական ենթակետերը, այլ նաև մարդկային ազատության և արժանապատվության պահպանման կարևոր սկզբունքները: Հետևաբար այն մեծ առնչություն ունի նաև մարդկային հոգեվիճակի և հոգեկան մի շարք գործառույթների հետ: Սույն բաղադրիչները բավականին սերտորեն կապված են գեղարվեստական գրականության հետ, քանի որ դրա գերխնդիրներից է նաև դատական իրավիճակներում մարդկային վարքագծի դրսևորումների ուսումնասիրությունը: Այդտեղից էլ մեր ջանքերը՝ փորձել լավագույնս միաձուլել գեղարվեստական գրականության և օրենքի կապն ու դրանից ստանալ պատճառահետևանքային իրավագիտության զուգադրություն:

**Առաջին գլխում** պատմական էքսկուրսի միջոցով ծանոթագրություններ են տրվում նախ՝ աստվածաշնչյան պատվիրանների, ապա՝ հունա-հռոմեական 12 օրենքների, Անգլիայի՝ Արթուրյան ժամանակաշրջանի ասպետական օրենքների վերաբերյալ, որոնց հիման վրա էլ կառուցվել է հետագա օրենսդրական համակարգը:

Այստեղ ներառվել են մի շարք իրավաբանների տեսություններ, որոնք իրենց հերթին առավել լրջորեն են հետազոտում իրավագիտության և գրականության ոլորտները և փաստում, որ անձի վարքագիծը բխում է նրա իրավական կերպից: Մասնավորապես տեղ են գտել իրավագիտության դոկտոր, ամերիկացի Ռոբերտ Վեյսբերգի և գերմանացի իրավագետ Ֆրից Շուլցի տեսությունները գրականագիտության և իրավագիտության համագործակցության վերաբերյալ: Ըստ նրանցից առաջինի՝ գրականության մեջ առկա օրենքներն ու իրավական համակարգը արգասավոր հնարավորություններ են ընձեռում: Նա առաջարկում է, որ որոշ գրողներ իրենց ընթերցողներին կարող են կրթել իրավական առումներով և ուսուցողական վառ օրինակների միջոցով շատերին հետ պահել սխալ վարքագծից և հանցավոր արարքներից: Ռ. Վեյսբերգը հստակորեն մատնանշում է, որ գրականության մեջ դատաիրավական արժեքի ներկայացումը բավական արդյունավետ մեթոդ է: Հենց այս տեսությունների հիման վրա էլ ուսումնասիրվում են Վ. Շեքսպիրի, Ջ. Բայրոնի, Լ.

Քերոլի, Թ. Դրայզերի, Հ. Գրեյի և Մ. Պյուզոյի ստեղծագործությունները, որոնք անքակտելիորեն կապված են հանցավորության և պատժի պատճառահետևանքային դրույթներին: Գրական նշյալ երկերում մանրազնին ուսումնասիրվել են անգլո-ամերիկյան վերոհիշյալ հեղինակների այնպիսի ստեղծագործություններ, որոնցում առկա է դատաիրավական համակարգի հետ որոշակի աղերս, և որոնցում ներկայացված են տվյալ ժամանակաշրջանի իրավական համակարգի գործունեությունը: Իհարկե, դա լավագույնս համադրված է գրական երկի դիպաշարային գծի հետ: Աշխատանքում առանձնացրել ենք նաև ենթագլուխ «**Քրեագեղարվեստական գրականության ժանրերի ձևավորումը և զարգացումը XX դարի ամերիկյան գրականության մեջ**», որտեղ ներկայացված են քրեական գրականության կարևորագույն ժանրերը և ենթաժանրերը, օրինակ՝ **կոշտ դետեկտիվ** (1920 - 1940 թթ.՝ Գլխավոր հերոսը մասնավոր դետեկտիվ է), **ոստիկանական ընթացակարգ** (1950-ական թթ.՝ Գլխավոր հերոսը ոստիկանության տեսուչ է), իրավաբանական ընթացակարգ, իրավաբանական թրիլլեր (1980-1990-ական թթ.՝ Գլխավոր հերոսը պրոֆեսիոնալ իրավաբան է) և այլն:

Կրիմինալիստական արձակը գրական ժանր է, որն ուշադրությունն ուղղակիորեն կենտրոնացնում է հանցագործության, դրա բացահայտման, հանցագործների կերպարների և նրանց դրդապատճառների վրա: Որոշ բնորոշ տարրեր կարող են հայտնվել գիտաֆանտաստիկ կամ պատմական ժանրի վեպերում: Կարելի է ասել, որ հանցագործության մասին գրական ակունքները տանում են մինչև Շահերազադեի հեքիաթներ (օրինակ՝ երեք խնձորի պատմությունը «Հազար ու մի գիշեր» ժողովածուում): Այնուամենայնիվ, միայն 1800-ականներին գրականագետներն անդրադարձան քրեական վեպին՝ որպես ժանրի: Այսպիսով՝ առաջին քրեական վեպ է համարվում դանիացի գրող Սթեն Սթենսեն «Հովիվը շղարշով» ստեղծագործությունը՝ հրատարակված 1829 թվականին: Ժանրի վաղ օրինակներից են Էդգար Ալան Պոյի «Սպանությունը Մորգ փողոցում» «Մարի Ռոժեի առեղծվածը» և «Հափշտակված նամակը» ստեղծագործությունները և Ուիլկի Քոլինզի «Կինը Սպիտակում» վեպը: Ֆրանսիացի գրող Էմիլ Գաբորիոն 1869-ին հրատարակված երկհատոր «Լեկոկ, դետեկտիվ ոստիկանության գործակալ» վեպում ներմուծեց գրականության մեջ մեթոդական, գիտական մտածողությամբ խուզարկուի կերպարը: Փակ սենյակում սպանության իրավիճակի էվոլյուցիան դարձավ հանցավոր գեղարվեստական գրականության զարգացման ուղենիշ: Ժանրի ամենահայտնի ներկայացուցիչն է համարվում Արթուր Կոնան Դոյլի նախորդը՝ Փոլ Ֆևալը, որի վիպաշարը 1862-1867 թվականներին նկարագրում էր Սքոթլանդ Յարդի դետեկտիվների գործունեությունը:

Ռուս փաստաբան Անատոլի Կոնիի «Կյանքի ճանապարհին», «Դատական ճառեր», «Դատական բարեփոխումների հայրեր և որդիներ» աշխատանքները համարվում են **վավերագրական կրմինալիստիկայի** առաջին ստեղծագործությունները, ուր որոշ հետադարձ հայացքներ պատկերում են սպանության հետաքննության ընթացքը: Ուիլկի Քոլինզի «Սրտերի թագուհի», «Լուսնաքարը», «Օրենքը և կինը» վեպերը, ինչպես նաև նորավեպերի «Խելագար Մոնկտոնի մասին եղբայր Գրիֆիթի պատմությունը» ժողովածուն համարվում են այս ենթաժանրի գլուխգործոցները: Խոսելով կրիմինալիստական արձակի մասին, իհարկե, չպետք է մոռանանք ամենահայտնի կերպարներին, ինչպիսիք են Արթուր Կոնան Դոյլի՝ Շերլոկ Հոլմսը, Ժորժ Սիմենոնի՝ կոմիսար Մեյգրեն, Ագաթա Քրիստիի՝ Էրկյուլ Պուարոն և Միս Մարպլը:

Նշելի է, որ իրավական համակարգում կարևորագույն տեղ են զբաղեցնում բարոյաիրավական արժեքները, որոնց հիմնական նպատակը մարդու պատասխանատվության և իրավունքի հստակ տարանջատումն է: Պատասխանատվությունը պատվի ու արժանապատվության կարևորության գիտակցումն է: Սակայն մարդկային որակների մեջ կարևոր արժեք լինելուց զատ՝ պատասխանատվությունը նաև աշխարհընկալում է և ապրելակերպ, որը բազմաթիվ դեպքերում հաջողության գրավականն է: Թեև պատասխանատվության զգացումը առաջին հերթին պատվաբեր և օգտակար է հենց այն կրող մարդու համար, այդուհանդերձ այն բնորոշում է նաև տվյալ մարդու վերաբերմունքը, սերն ու հարգանքն իր շրջապատի նկատմամբ: Պատասխանատու մարդը նախևառաջ գիտակցում է խոսքի արժեքը և խոսքը գործի վերածելու կարևորությունը: Վերջինս էլ ենթադրում է մինչև վերջ հավատարիմ մնալ իր խոստումներին:

Պատասխանատվությունը մարդու լավագույն հնարավորությունն է՝ փոխելու և վերանայելու սեփական կյանքը, իսկ դրա բացակայության դեպքում մարդ մշտապես իրեն տեսնում է զոհի կարգավիճակում և հուսահատորեն մտածում, որ ոչինչ իրենից կախված չէ:

«**Քրեագեղարվեստական գրականության ժանրերի ձևավորումը և զարգացումը XX դարի ամերիկյան գրականության մեջ**» ենթագլխում ներկայացված են քրեական գրականության կարևորագույն ժանրերը և ենթաժանրերը, օրինակ՝ կոշտ դետեկտիվ, ոստիկանական ընթացակարգ, իրավաբանական ընթացակարգ, իրավաբանական թրիլլեր և այլն:

Քրեական գրականության ժանրերից են դետեկտիվ պատմությունները, առեղծվածային և սպանության վեպերը, ինչպես նաև ոստիկանական կամ լրտեսական երկեր: Այս ժանրի ստեղծագործությունները պատմական և գեղարվեստական գրականության նմուշներից տարբերվում են նրանով, որ քրեական գեղարվեստական գրականության վեպերում առկա են սպանությունների և հանցագործությունների լուրջ դրվագներ և հետքեր, որոնք բացահայտվում են հատուկ մասնագիտացված դետեկտիվների կամ ոչ մասնագետ կերպարների կողմից: Քրեական գրականությունն ունի բազմաթիվ ենթաժանրեր, այդ թվում՝ դետեկտիվ գեղարվեստական գրականություն (օրինակ՝ ո՞վ է արել), դատական դրամա, ծանր հանցագործությանը վերաբերող գրականություն և իրավական թրիլլերներ: Քրեական դրամաների մեծ մասը կենտրոնանում է հանցագործությունների հետաքննության վրա և չի ներկայացնում դատարանի դահլիճը: Անորոշությունն ու առեղծվածը տվյալ ժանրում գրեթե ամենուր հանդիպող հիմնական տարրերն են: Գրականության մեջ քրեական ժանրի վեպերի և պատմությունների սկզբնաղբյուրը համարվում են նաև աքկադական ‹‹Գիլգամեշ›› էպոսը և հին հնդկական ‹‹Մահաբհարաթա›› գիրքը:

Քրեագեղարվեստական գրականությունը յուրահատուկ հոգեբանական ազդեցություն է թողնում ընթերցողի վրա և նրան հնարավորություն է տալիս միջնորդավորված կերպով հետևելու դեպքերի և իրադարձությունների ընթացքին, ինչպես նաև ակամա դառնալ վկա՝ բացահայտելով հանցագործության դրդապատճառներն ու իրական հիմքերը: Ընթերցողների մեծ մասը քրեական գեղարվեստական գրականությունը դիտարկում է որպես առօրյա խնդիրների լուծումներ փնտրելու այլընտրանքային միջոց, որի շնորհիվ հիմնականում զարգացնում են վերլուծական մտածողությունը:

Հիմնական տարրը, որն առավել հստակորեն տարբերակում է քրեական վեպը առեղծվածային համանման ժանրի գրականությունից, այն է, որ իրականում այդ վեպերում առեղծված չկա: Դա հանցավոր կյանքի պատկերում է, և այն պատմվում է հան-

ցագործի տեսանկյունից: Դրանում ավելի շատ քննարկվում է՝ ոչ թե ով է կատարել հանցանքը կամ սպանությունը, այլ ավելի շատ՝ ինչու է դա կատարել: Գեղարվեստական քրեական վեպերում և առհասարակ առեղծվածային պատմություններում հեղինակը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հասարակության առջև ծառացած սոցիալական խնդիրները, որոնք էլ իրենց հերթին դրդապատճառներ են հանդիսանում հանցավորության ծագման և կատարման համար: Քրեագեղարվեստական ստեղծագործությունների հեղինակների նպատակն է ներկայացնել տվյալ հանցագործությունների կատարման ոչ միայն հիմքերը, այլև լուծումներ առաջարկել դրանց կանխման համար: Հանցագործ-կերպարների, ինչպես նաև հանցավոր ավազակախմբի միջոցով առանձնահատուկ կերպով տեսանելի է դառնում տվյալ հասարակության բարոյաիրավական համակարգն ու դրանցում առկա արժեհամակարգերը:

Հստակորեն կարելի է տարբերակել քրեական գեղարվեստական վեպը դետեկտիվ ստեղծագործությունից նրանով, որ գրքում ուշադրությունը կենտրոնանում է կողոպուտի կամ որևէ ուրիշ անօրինական գործունեության վրա, այն է՝ ոչ թե որևէ մեկի վրա, ում գործը դա լուծելն է կամ կանխելը. այդ դեպքում գիրքն ակնհայտորեն քրեական վեպ է: Եթե, չնայած զանգվածային կամ անձնական սարսափելի իրադարձություններին, հեղինակը չի փորձել բարոյական որևէ դատողություն անել, կամ եթե հեղինակը հրաժարվում է առեղծվածային գրող համարվելուց, այլ ներկայանում է որպես մեկը, ով պարզապես ցանկանում է քննել հանցագործին, նրա վարքագիծն ու հասարակությանը դեմ կանգնելու իր միտումները, ապա հեղինակն առավելապես ձգտում է իր շուրջն ստեղծել առեղծվածային մթնոլորտ: Ասել է թե՝ դետեկտիվ գեղարվեստական գրականությունն ունի բարոյական խիստ արժեքներ և փիլիսոփայորեն հակված է լինել պահպանողական. քրեական գեղարվեստական գրականությունը միտված է արմատական արժեքների, ավանդույթների ու սովորույթների պահպանմանը:

Քրեագեղարվեստական գրականության ամենավաղ արտահայտություններից մեկը ներկայացված է Ռոբին Հուդի արդարության հանդեպ հանցավոր կերպարում: Սրանք զտվեցին՝ դառնալով պատումներ ջենթլմեն ստահակների մասին, որոնց մարմնավորումն էր Ռաֆլսը, սիրողական ջարդարարը և այլ «հմայիչ» սրիկաները, որոնք գողանում էին հիմնականում այն մարդկանցից, որ թվում էր՝ դրան արժանի էին: Նման ստվերային կերպարներն ի վերջո անցան մյուս կողմը և սկսեցին բացահայտել հանցագործությունը կամ կանխել այն: Ամերիկայում կազմակերպված հանցավորության հայտնվելով գանգստերական պատմությունները միաժամանակ դարձան և՛ հնարավոր, և՛ հայտնի: Մարդիկ ցանկանում էին կարդալ Ալ Կապոնեի և Ջոն Դիլինջերի մասին՝ լինի դա օրաթերթում թե իդեալականացված գեղարվեստական ձևով: Հետագա տարիներին Մարիո Պյուզոյի «Կնքահայրը» մաֆիայի կյանքի իր ակնհայտ ռեալիստական (թեև ամբողջովին գեղարվեստական) պատկերմամբ դարձավ բոլոր ժամանակների ամենավաճառվող քրեական գանգստերական վեպը: Կրիմինալիստական ժանրի վեպի տեսակներն ավելի մանրամասն ներկայացված են աշխատանքի Հավելված 5 բաժնում:

Հիմնվելով մի շարք տեսությունների վրա, որոնք փաստում են 20-րդ դարի ամերիկյան հասարակության մեջ գանգստերական և կլանային հանցավոր խմբավորումների մասին, անդրադարձել ենք իտալական «Կոզա Նոստրա» և իռեական «Կոշեր Նոստրա» հասկացություններին, որոնք անմիջական կապ ունեն իտալական և իրեական մաֆիաների առաջացման հետ: Սույն գաղափարախոսությունները ներկա-

յացվում են պատմական հենքով, ըստ որի՝ ամերիկյան հասարակության մեջ XX հարյուրամյակում՝ արդյունաբերական հեղափոխությունից, Առաջին և Երկրորդ աշխարհամարտերից հետո, առաջացան օրենսդրական և իրավական բազմաթիվ խնդիրներ: Իսկ դրանք արդեն իսկ լուծվում էին կլանային հոգեբանության սեփական օրենքների շրջանակներում: Ամենից քննարկվող կերպարները Հ. Գրեյի «Ավազակները» և Մ. Պյուզոյի «Կնքահայրը» վեպերի կենտրոնական դեմքերն են՝ Նուդլսն ու Դոն Վիտո Կորլեոնեն, որոնք համեմատվում են կլանային հանցավորության համատեքստում: Մինչդեռ Թ. Դրայզերի «Ամերիկյան ողբերգություն» վեպի գլխավոր կերպար Քլայդը հանդես է գալիս որպես զոհ, որը դարձել է հասարակության անտեսվածության և անտարբերության առանցքը: XX դարի ամերիկյան հասարակության շարժիչ ուժն է դառնում նյութականը, որը որոշակի դեպքերում կործանարար ազդեցություն է ունենում անհատի բարոյահոգեբանական արժեհամակարգի վրա: Դրա շնորհիվ էլ անհատը կորցնում է խելամտորեն և արդարացիորեն դատելու ունակությունը և տրվում է նյութական հաճույքներին: Ցավոք, շատ դեպքերում սա ունենում է կործանարար ազդեցություն, ինչպես և պատահում է երեք վեպերի կենտրոնական կերպարների պարագայում: Այս հարցին անդրադարձել ենք ուսումնասիրության երկրորդ գլխում:

## Գ Լ Ո Ւ Խ II
## ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԱՅԼԱԿԵՐՊ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ XX ԴԱՐԻ ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ և ԳԱՆԳՍՏԵՐԱԿԱՆ ՎԵՊԵՐՈՒՄ (ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԸ)

**Երկրորդ գլուխը**՝ «Բարոյաիրավական համակարգի առկայացման այլակերպ դրսևորումները XX դարի անգլո-ամերիկյան գրականության քրեական և գանգստերական վեպերում (առաջացման պատճառները, պատմական իրողությունները, հետագա ընթացքը)», ըստ էության աշխատության նախորդ գլխի տրամաբանական շարունակությունն է: Այստեղ ուսումնասիրվել են երեք վեպերում պատկերվող հանցավորության դրդապատճառները, պատժելիության և անպատժելիության հատման կետերը, հասարակության արձագանքը հանցավորության տարածմանը և այլն: Ատենախոսության այս հատվածում առավել մանրամասնորեն ուսումնասիրվել են XX դարի Ամերիկայում օտար ազգերի տեղափոխությունն և այնտեղ նրանց ավանդական օրենքների ամրապնդումը: Մասնավորապես իտալական «Կոզա Նոստրա» և հրեական «Կոշեր Նոստրա» հանցավոր խմբավորումները իրենց տարածումն էին գտնում Ամերիկայում և սփռում սեփական կլանային օրենքները: Դրանց շրջանակներում քննարկվում են իտալական օմերտայի՝ լուռ մնալու և հրեաների կոշերների՝ չափավորության և համակերպվածության օրենքները, որոնք ներկայացվում են ամերիկացի քրեագետներ Լեո Քոհենի և Ռիչ Քաթչերի տեսությունների հենքի վրա: Նրանք առաջ են քաշում այն գաղափարները, ըստ որոնց՝ հրեա-ամերիկյան կազմակերպված հանցագործությունը գանգստերների շրջանում էթնիկական իրավահաջորդության արտացոլումն էր, որը հակված էր հետևելու ԱՄՆ-ի ներգաղթյալների ալիքներին՝ անգլիացիներ, գերմանացիներ, իռլանդացիներ, հրեաներ, իտալացիներ, ասիացիներ և ուրիշներ:

Անդրադարձ է կատարվել այն փաստին, որ եթե կլանային կամ մաֆիոզային հանցագործության դեպքում անհատն առաջնորդվում է սեփական հորինած օրենքներով և պատժի ենթարկում մյուսներին դրան չենթարկվելու դեպքում, ապա Քլայդ Գրիֆիթսի պարագայում նա է տրվում հասարակության հորինած կեղծ օրենքներին ու բարեպաշտությանը և, ցավոք, ապրում է բարոյահոգեբանական անկում, որի հետևանքով էլ դառնում է «անմեղ մեղավոր»:

## ԳԼՈՒԽ III
## ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴՐԱՆՑԻՑ ԲԽՈՂ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՄԵՐԻԿՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ», «ԱՎԱԶԱԿՆԵՐԸ» ԵՎ «ԿՆՔԱՀԱՅՐԸ» ՎԵՊԵՐՈՒՄ

Ատենախոսության **երրորդ գլուխը**՝ «Վարքագծային հոգեբանական տեսությունների և իրավական համակարգում դրանցից բխող օրենքների ազդեցությունները Թ. Դրայզերի «Ամերիկյան ողբերգություն», Հ. Գրեյի «Ավազակները» և Մ. Պյուզոյի «Կնքահայրը» վեպերում», իրենից ներկայացնում է հոգեբանական դրույթների վրա հիմնված ուսումնասիրություն: Այստեղ առավելապես բացահայտվում են հանցագործների ներքին էությունները և արտաքին աշխարհի ներազդող գործոնների ազդեցությունը: Ըստ այդմ՝ Կայենին դիտարկելով որպես մարդկության առաջին հանցագործ և ուսումնասիրելով նրա վարքագծային դրսևորումները որպես նախանձախնդիր և չարամիտ անձ՝ երեք վեպերի կերպարների հանցավորությունները քննվում են հենց այդ դրույթներից ելնելով: Ինչպես նաև այստեղ հաշվի են առնվում զոհի՝ որպես հանցավորության հրահրողի հանդիսանալու փաստերը: Այս գլխում անդրադարձ է արվում մեղքի, խղճի և բարոյականության օրենքների խախտման և հատուցման գաղափարներին: Անդրադառնալով կրոնական սկզբունքներին և օրենքներին՝ քննվել են հասարակական գիտակցության մեջ ամրացած և գործող խղճի և բարոյականության թեզերը, որոնք ոչ միշտ են անաչառորեն իրականացվում որպես իրավական նորմեր: Այստեղ մեղքի և հատուցման կանոնակարգը դիտարկվում է որպես հասարակությունից ծնվող և դրա ներսում անընդհատ եռացող գործընթաց: Համեմատական և հակադրական զուգորդումների շնորհիվ պարզ է դառնում, որ երեք վեպերի կենտրոնական կերպարները հանցագործության հետ առնչվում են այնքանով, որքանով որ խախտված է իրավական համակարգն, և հետևաբար իրենց նպատակն է դառնում սեփական օրենքների հաստատման ու սահմանման համար պայքարելը:

XX դարում իրականացվող գործողությունների մասին խոսել և չներկայացնել դրանցից բխող հոգեբանական բոլոր ազդեցությունները կլինի ոչ լիարժեք: Հետևաբար աշխատության երրորդ գլուխը հոգեբանական տեսությունների վրա հիմնված վերլուծություն է, ուր քննվում են երեք վեպերի կերպարների բարոյահոգեբանական դրսևորումները տարբեր իրավական և ոչ իրավական իրավիճակներում: Սոցիալական միջավայրն ու ճանաչողությունն այս դեպքում մեծ դեր են կատարում անձի անհատականացման գործընթացում, ինչն էլ, հարկավ, կարող է հղի լինել տարատեսակ վտանգներով և հանցավորություններով: Ատենախոսության մեջ նաև քննարկվում և ուսումնասիրվում են ամերիկյան հանցավոր հասարակության և բարոյաիրավական հասարակության սերտ կապն ու դրանց հարաբերությունների արդյունքում ծագած խնդիրներն ու հանգուցալուծումները:

Հարկ է նաև նշել, որ պատասխանատվության կարևորությունն ու անհրաժեշտությունն առաջին հերթին ակներև է դառնում սիրո պարագայում, քանի որ, աստվածային զգացմունք լինելուց զատ, սերը նաև պահանջում է մեծ պատասխանատվություն: Իսկ այն սերը, որի հիմքում չկա պատասխանատվություն, մարդկային եսասիրության ամենավառ օրինակներից մեկն է:

Մարդկային պատասխանատվությունն էլ իր հերթին ծագում է կամքի ազատության և դրա գիտակցման արդյունքում: Այն ուսմունք է, ըստ որի՝ հնարավոր է ընտրություն կատարել՝ անկախ որոշակի նախապայմաններից: Կամքի ազատությունը հետքեր է թողել կրոնի, էթիկայի և գիտության մեջ: Օրինակ՝ կրոնում կամքի ազատությունը ենթադրում է, որ մարդկային ցանկությունները և ընտրությունը իրականանում են աստվածային ամենագիտությամբ: Էթիկայում կամքի ազատության գոյությունը սահմանում է մարդու գործողությունների բարոյական պատասխանատվությունը: Իսկ գիտության մեջ կամքի ազատությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու մարդկային վարքագծի կանխատեսման մեթոդները:

